

ՀԱՆԴԵՍ ՊԱՏՄՈՒԱՆ

ՀԱՄԱԹՈՏՈՒԹԻՒՆ ՎԵՆԵՏԿԵՑՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ¹

Վեհափառ ակզբանաւորութեանք առ գործ ի ճշմարիտ մեծութիւն բարձրացեր էր. աղքատութիւնն՝ իրեն խթանն էր, գործօնէութիւնն՝ իւր դպրութիւնն էր ապար և նախնական ձեռագործներն յառաջացած և հարիւրագատիկ աւելցած էին, նաւական աշխատութիւններն զարմանաց արժանի եղած, նաւարանն եղական։ Դշտութիւնն էր ապար և նաւարանն եղական։ Դշտութիւնն էր գործն բոլոր Միջերկրականին եղերքը ճանչցուած և պատկառելի էր, ուր նա Միջն գարութիւն լսուած ամենէն ընդարձակ և ծալվեալ վաճառականութիւնը կը բանեցընէր։ Կայսերք, քահանայապետք, Բիւզանդացիք, Սարակինուք և Նորմանք երրեմն երրեմն զայն բարեկամունեալ կը վափաքէին կամ թշնամութիւնն էր վախսնային։ Փոքրիկ տէրութիւն մը առանց նեղութեան նաւատորմիդ կազմեր էր, որ կարող էր բանակ մը փոխադրելու և ինքնակալութեան մը տէրապետելու։ Հայրեննեաց սէրն վենեստկոյ մէջ միշտ իրեն արժանավայել էր. բատ առթիւն քաղաքացիք պատրաստ էին օգնելու խորհրդով, գործով, ընչիւք և անձամբ։ Քաղաքն այն ժամանակէն ի վեր հանդէսներու քաղաք էր, բայց հանդէսներու որ ըզմարմին կը զօրացընէին (ըմբշամարտութիւնք, նաւարշագ, զինաշարժու-

թիւնք), կամ զսիրտս կը վառէին (Մարիտմեանքն, Համբարձմանն)։ Իբրև սքանչելեօք ջրոյ մէջն բարձրացած վառաւոր շինուածովք սկսեր էր վարդարութիւլ. արդէն Ս. Մարկոսի հրապարակն գեղեցկագոյնն կը համարուէր. տոժին պալատը հիանալի կը կոչուէր. մոյր եկեղեցին գեղեցիկ եկեղեցի մակղիրը ստացեր էր, որուն որմերուն վրայ հասարակապետութեան վառաւորութիւնները կարդալու կու գային օտարք։ Շատ կարդաւորութիւնք որ մերձաւոր ժամանակաց պարձանք են, այն ժամանակէն Վենեստկոյ մէջ սովորական էին եթէ ոչ հնացեալք։ Վենեստկանա դիտանագիտութիւնն ծանուցեալ էր աշխարհի. և Մարկոս Բոլց կննդունական և արեւելեան Սովոյ վրայ առաջին սոյդ տեղեկութիւնները կը ծանուցանէր Եւրոպիոյ։ Վերջապէս՝ Վենեստիկ աշխարհիս վրայ ստացած համբաւոյն արժանի էր։

Սակայն ժողովուրդն տէրութեան պաշտօններէն զրկուած շղանդաղեցաւ ձայնը բարձրացընելու. որուն հաւատակին են Մարինոյ Պոքրոնիոյի (1300) և Պայամննեց Նիէրոլոյի (1340) դաւադրութիւններն։ Կ'ընդունինք որ այս վերինոյս զիտումն ուրիշ էր. բայց չենք կրնար ժիտել որ կուսակցաց մեծ բազմութիւն մը գտաւ ժողովրդեան մէջ, որոնց կիրքը վիտցաւ գրգռութեան պար։ Դաւաճանաւորութեան գործադրուե-

1 Տես Հատուր Աչ, էջ 167։

լուն առթիւ եղած աւարառութեամբն հանգերձ պէտք չէ մոռնալ թէ շատերն ինչ պատճառաւ. 'ի սկզբան ոսք եղան և յետոյ թերես սպաննուեցան. Դաւաճանութիւնն, շյաջողելով՝ ինչպէս որ սովորական է, աւելի ամրացընելու ծառայեց այն աղնուապետութիւնը զոր կործանել կը մտածէր: Վասն զի ծասանց ժողովը հաստատելու պատճառ եղաւ. որուն առաջ պաշտօնն եղաւ փնտըռել կամ չնչել օրինաց հակառակող մատնչ անուանեանելը. բայց յետոյ իսկոյն վարչութեան գործիք՝ մանաւանդ թէ կեդրոն դարձաւ: Այսպէս ծասանց կինկնէր հսկել հաստատեալ կարգաց կատարման, որոնց գէմ գարձեալ գաւ եղաւ յամին 1328, և քիչ վերջը (1355) նոյն իսկ Մարին Ֆալերոյ տոժին ձեռքով. որ հաւանօրէն առանձնական քինալինդրութենէ շարժած կը փափաքէր բացարձակ և առանձին զլուխ ըլլալ հասարականպետութեան. իրեն փառամէր ըլլակից նեցուկ գտաւ, ըստ պատմշաց դարսուն, ժողովրդեան այն մասն որ ինքզինքն արհամարհեալ կը սեպէր տիրապետող աղնուապետութե բուռն վարմունքէն: Բարեբաղդաբար գաւն յայտնուեցաւ, և այսպէս բանաւորութեան առաջն առնուեցաւ, որ՝ խտավոյ ուրիշ քաղաքաներուն պէս՝ զկնենետիկ պիտի հարաստահարէր: Աւելորդ է դաւակցաց և տոժին թշուառ վերջը յիշել: Բայց այս նոր վտանգոս յաղթական աղնուապետութեան աչքը բացաւ, որ փորձով տեսաւ թէ չէր կրնար թագաւորել եթէ ինքիրեն մեծ սանձ մը չդնէր, յիշեալ ծասանց ժողովոյն ձեռքով, որ 1335էն 'ի վեր կայսւն սահմանուելով, տաւն անձէ բաղկացեալ էր, բայց տոժն և վեց խորհրդականք ալ լոյնմուտք և քուէ ունէին. և իրբե օրինաց ներկայացուցիչ՝ Տէրութեան երեք իշխանաւորներէն (Anogadori di Comun) գոնէ մին պէտք էր առաջիկայ գտնուիլ: Սակայն գործոյն ծանրութիւնն 1855ն ստիպեց զջասանքը բաւելուած (Aggiunta կամ Zonta) մը խնդրելու քսան նշանաւոր անձինքներէ

կազմեալ. և այս յաւելուածս շատ կամ նուազ թուով, ըստ պարագային, 'ի ժողովը կը գումարուեր երբոր մեծ խրնդիր մը ըլլար: Զենք կրնար հօս մանրամասն ծասանց վերաբերեալ պաշտօն ները յիշել. սյուչափ ըսենք թէ իրենց պարագն էր զրուած կարգաց 'ի պաշտամութիւն հսկել: Եւ յայսնի նյան է իրենց իմաստութեան 'ի սկզբանէ հետէ իմանալին որ աղնուապետութեան յաղթութիւնն ոչ պէտք էր և ոչ կարելի զժողովվարդն ընկնելով ամրացընել, այլ աղնուականաց զդուշաւորութեամբ: Ուրեմն ժողովրդենէն աւելի առ աղնուականս երկիւղալի եղան ծասունք: և իրենց զեղծմամբն հանգերձ, որ յայտնի է թէ տղիտութեամբ կամ չարամութեամբ աւելի բարդուեցաւ, հասարակապետութեան անունը և անկախութիւնը փրկեցին, և շատ անդամ իրենց վրայ եղած համբաւէն աւելի լաւագոյն եղան:

Զայս ըստինէս վերջը գժուար չէ իմանալ թէ ինչպէս հասարակապետութեան կարգաց հիմնական փոփոխութեամբն ալ ռամկին աղնուական զդաց մոնքն չինչաւ կամ չնուազեցաւ: Ճաւալի է որ ասոր փորձն ընդ մէջ վենետիկոյ և ձենովայի հասարակապետութեանց երրայրատեաց պատերազմաց մէջ կը գտնենք: Բաղմաթիւ եղան այս պատերազմներս, բայց կրնան մէկ մը միայն կոչուիլ, որ վաճառականական նախանձորութենէ ծագելով քիչ շատ երկուքին ալ ծանր միասովը վերջացաւ: Լատին կայսրութեան կանգնումն 'ի կոստանդնուպօլիս և յետոյ անոր անկումն իրբեն հրոց մէջ ձէթ լցընել եղաւ: Վենետիկոցիք յաղթեալք 'ի բուրցուա (1298), յաղթողք 'ի լոյէրա (1353), երկրորդ անդամ յաղթեալք 'ի Սաբիէնցա (1354) և դարձեալ յաղթողք յիշեցից (1378), այնպիսի պարտութիւն մ'ունեցան 'ի բոլա՛ որ զջենովացիս մինչ միոնձիայի մէջ բերաւ, մանաւանդ թէ 'ի ծոց վենետիկց լակին (1379): Վենետիկ առանց նաւապետի, առանց նաւատորմի, առանց պաշտուց, ա-

ուանց պաշտպանութեան հնարից, և ըստ գոռող ասացուածոյ Գետրոս Տօ-
րիայի, գրեթէ առանց յուսոյ, կարծես
թէ ՚ի վախճան իւր հասեր էր: Ա, ն ա-
ռնն ազնուականք դնախիլին գարմանա-
լիքն յիշեցին, և յանուն տոժին ընդհա-
նուր ժողովն գումարուեցաւ: Ազնուա-
կանք վերջին պատառնին ամելին հետ
պիտի բաժնէին: բայց ամենքն թէ ազ-
նուականք և թէ ուամիկը՝ պէտք էին
խորհրդով և բազկաւ օգնել հասարա-
կաց պաշտպանութեան: Ոչ ոք իր
պարտքէն պակսեցաւ, և ոչ կանայք
անդամ: Քիչ օրուան մէջ գանձն հաւա-
քուեցաւ. նաւատորմիլ մը պատրաս-
տուեցաւ զինեալ բանակով: Անդրէաս
Քոնդարինի տոժն ոչինչ արդեք համա-
րելով ութմանմեայ հասակն՝ տորմզին
հետ պատերազմի դնաց: Վեկտոր Բի-
զանի բանտէ հանուելով և կարողա ծէ-
նոյ Արևելքէն նոր դարձած՝ կորովով և
խոհեմութեամբ զիրար գերազանցե-
ցին: Ցոնիսի 24th յամին 1380 գիտն-
հիա ետ առնուեցաւ. և յաջորդ տարին
(8 օգոստոս) Ամեսէոյ Սաւոյից իշխա-
նին միջամտութեամբն երկու նախան-
ձորդաց մէջ խաղաղութիւնն կնքուե-
ցաւ ՚ի Դուրին: Այս առթով երեսուն
ընտանիք ՚ի ժողովրդենէ իրրե ՚ի վարձ
արժանաւոր՝ Մեծագոյն ժողովոյն ան-
դամ ընտրուեցան:

Այս ժամանակներս գիպուածներ կը
հանդիպէին որոնք մեծ ապէս հասարա-
կապետութեան քաղաքական կերպա-
րանքը պիտի փոխէին: Մինչև ցժիդար
ծովու վրայ էր վենեսեկոյ աշքն, և ի-
տալական ցամաքին վրայ պատառիկ
մը հոյ միայն ունէր: Սակայն կը սկը-
սէին Թուրքը Արևելքի մէջ երենալ, և
Խոսալիոյ իշխանութիւններն կազմուիլ.
Եթէ առաջինքն քիչ ասենէն կրնային
ահաւոր թշնամիններ ըլլալ, երկրորդ-
ներն արդէն ներացուցիչ զրացիներ
դարձեր էին: Ռուբեն հասարակապե-
տութիւնն ցամաքին վրայ դարձուց մը-
տածութիւնը, և միսաւ իտալական պա-
տերազմաց և քաղաքական խնդրոց մէջ
խառնուիլ, իր թիկունքը հզօր թշնա-

միներէ պաշտպանելու և հեռաւոր վը-
տանգաց գէմ յենարան մը պատրաս-
տելու համար: Աղէկէ եղաւ ասիկայ թէ
գէշ, մատենագիլը տարաձայն են: Յայտնի է թէ խոսալիոյ պատերազմներն
հասարակապետութեան ուշադրութիւ-
նը ցրուեցին, որով պէտք եղածին պէս
ուժով չպաշտպանեց կոստանդնոսովու-
սոյ կիսակրծան բաղդը. բայց թուր-
քաց հետ պատերազմներուն մէջ կրնար
արդեզ գրեթէ երկը դար դիմանալ,
դողես միայնակ հսկայի մը դիմաց, ե-
թէ հեռաւոր ծովերու մէջ ունեցած կա-
լուածներէն զատ ուրիշ զօրութիւն չու-
նենար, որոնք քայլ առ քայլ պատե-
րազմաւ թշնամայն ձեռքն անցան:
Զենք կրնար այս տեղ ոյն առարկու-
թեան վրայ վիճել և ոչ վենետիկեան տի-
րապետութեանց մանրամասն պատմու-
թիւնն ընել: Բաւական համարինք ա-
մենէն նշանաւոր տիրապետութեանց
շարքն յառաջ քերել Զիքոնեայի ժա-
մանակագրութեանէն. որք են, Դրէվիլ
(1383), Վիչէնցա, Ֆէրգրէ, Պասա-
նոյ, Պէլլունոյ (1403), մաս մը Բոլէզի-
նէի (1404), Բատուա, Վերնա (1405),
Ռիտինէ և Ֆրիուլի (1420), Պրէշիա
(1426), Պէրկամոյ (1427), Վրէմա
(1449), Ռովիկոյ (1484) և Վրէմնա
(1499): Չիշատակեցինք ժամանակա-
ւոր կալուածները, որովհետեւ թէպէտ
կարճատէ չեղան՝ բայց բուն Ցամաք եր-
կրի կոչուած գաւառներուն մասը չեն
կազմեր. որոնք, արժանի է յիշատա-
կել, ինքնարերաբար անձնատուր ըլլա-
լով կամ ՚ի զինուց յաղթուելով հան-
դերձ իրենց յատուկ օրէնքն, առան-
ձնանորդութիւններն և սովորութիւն-
ները կը պահէին. գոհ ըլլալով հասարա-
կապետութիւնն զիսաւոր քաղաքնե-
րուն համար գատաւոր (Podestà) մը
զրկելու, որ ժողովոյն նախագահն էր և
գատերը կը կատարէր, և զօրավար (Ca-
pitano) մալ որ կը հսկէր ՚ի պաշտպա-
նութիւնն և հարկաց վրայ: Երկրորդա-
կան քաղաքաց մէջ այս երկու պաշ-
տօններս մէկ անձի մը վրայ կը կեն-
դրունանային: Բայց եթէ երկուք ըլլա-

յին՝ թէ մէկ, արդարութիւնն առանց խորութեան էր, և պաշտպանութիւնն հայրական . ուստի կ'ըսէր կարողոս Քարգանէց՝ թէ զենետկոյ պետութեան հիմն սարսափ չէր՝ այլ ազնուական բարեկամութիւն մը ժողովրդոց » :

Եւ սակայն այս ժամանակներս եղած են այն գ-էպքն որոնց համար ծանր կ'ըստվ ամրաստանուած է հասարակապետութիւնն և ցայսօր ևս կը կըրկնուի անգթութեան և նենգութեան անուամբք : Անշուշտ ընթերցողաց միուքն Քարրարէզի, Քարմանեռոյ և մոռքարի ընտանեաց կը դիմէ : Առանց հակածառութեանց մէջ մտնելու, զորս աւելորդ կը համարինք այս տեղ, կ'ըսենք որ Քարրարէզիներն դատապարտուեցան (1406) 'ի կործ անումն հասարակապետութեան դաւաճանութիւն մեքենայելնուն համար . թէպէտ և կամակորութեամբ ուրացան, բայց իրենց վերջն այնպիսի ահաւոր հանդամանգք չեղաւ՝ ինչպէս որ վիպասանք կը զարդարեն : Քարմանեռույին նկատմամբ ներելի ըլլայ մեզի ըսել, թէ լիուլի վստահ չենք իրեն անմեղութեան վրայ, ինչպէս որ անոր ջատագովներն կ'ուզեն : Գիսատուեցաւ (1482), բայց իրեն դատն այնպէս հանդարտութեամբ, և կրնանք ըսել, այնպէս խնդովլ 'ի գլուխ տարուեցաւ, որ անկորզնասէր ընթերցող մը չի կրնար տարակուսիլ թէ հնաբրազիտութեամբ և դիտմամի սպաննուած ըլլայ : Յակոր Ֆուգարի երեք դատապարտութիւն կրեց : Առաջնոյն կարծենք արժանի էր (1445), որ շատ ծանր ալ չեղաւ, Տարակուսական է թէ արդեօք երկրորդին ալ արժանի էր (1451) . կ'ուզենք հաւատալ որ իրմուլայ Ցոնադոյի սպանութեան առաջնորդ եղած ըլլայ, թէպէտ և ստոյդ չէ որ զինքն ամբաստանուղն Անտոն Վէնիէր՝ յետոյ խօսքը փոխած ըլլայ, կամ ատեն անցնելք վերջը Տամարիտ յանցաւորն զբանուած ըլլայ : Ա՛ը և իցէ կ'ըստվ 'ի կրետէ աքսորուելով Թուրքից հետ պարինաւոր վերաբերութիւններ սկըսաւ ունենալ . և այս ըստ օրինաց

հասարակապետութեամեն յանցանք էր, որով տարուան մը բանտարգելութեամբ և կրկին յաքարոր զըրկուելով պատժուեցաւ (1456) : Եւ մինչդեռ բարեկամներն իրեն համար ներումն ստանալու ջանից մէջ էին, անոր մահուան լրտին հասաւ (1457) : Ուրիշ կ'երպով մտածելու է ծերունի ֆրանկիսկոս Ֆուգարիի գահնկեցութեան վրայ, որ կամ Տէրութեան խիստ դատամամբն եղաւ, և կամ՝ ինչպէս պարագաներն կասկածել տուխն, ընտանեաց անհաշտ վրէժխնդրութեամբ : Ֆուգարիի դքսութիւնն (1423-1457), նշարիտն ըսելով, պատերազմօք և քաղաքական կնճոօք լի եղած էր, որոնց մէջ թերևս վենետիկ իրեն ճշմարիտ շահուց ուշ չըրաւ, և սկսաւ զդալ այն վնասները, որոնք յետոյ զինքը պիտի կործանէին : Բայց տոժն, ապադային համար մտախորհ և արդէն յոդնած, կ'ըսուի թէ վարչութիւնը զօրագոյն բազկաց ուղած ըլլայ յանձնել, և խրնդիրքն երեք անգամ (1433, 1442, 1446) ընդունուած ըլլայ : Անտարակոյս օրէնքն կանխատեսած էին տոժի մը ինքնակամ հրաժարել կարենալու կամ չկարենալու դիպուածը : Բայց այս անգամկ'ուզէին որպայս ծանր գործութեած ագոյն ժողովոյ բազմաթիւ քուէիքն ըլլայ : Արդ ֆրանկիսկոս Ֆուգարի կենաց ութուն և չորրորդ հասունացեալ տարին հասած, զրոյ ըստ իւր ըմբռամանն հայրենեաց համար ծախեր էր, կրկին անգամ լսեց հրաժարելու նսխի խորհուրդը և ապա ծանուցումը, ոչ 'ի Մեծագոյն ժողովոյ այլ 'ի Տասանց ժողովոյն (1457) : Եթէ նշարիտ ալ ըլլան քանի մը տիրագոյն պարագաներ, յայտնի է թէ այսպիսի զառն գժրախտութիւնն մը կըող բարձրամիտ ծերուն սիրտն կտոր կտոր եղաւ՝ երբ առանձին և լքեալ իջաւ այն սանդղէն, ուստի ցնծութեամբ ժողովրեան և նախանձու ազնուականաց 'ի վեր եւ լըր էր Բայց հրամայելու յայտնի զեղծումն Մեծագոյն ժողովոյն ձեռքով զալուեցաւ : Երից Դիմոց իշխանու-

թիւնն չափաւորուելով (1458), Տասանց ժողովն պատշաճ դատուեցաւ (1468)։ որոնց ամենայն գաղտնութեան արժանի ինդիբներ յանձնուելով, առանց զգալու նորանոր զեղծմանց համբայ բացուեցաւ։

Հասարակապետութիւնն զեռ իր տարածականութեան ոյժն չէր սպառած, բայց միւս կողմանէ իրեն անկման նըշանները կը նշմարուէին։ Սակայն այսու չենք ուգեր ֆուքարիի յուղեալ վարչութեան հետևանաց մեծ նշանակութիւն մը տալ: «Եթէ Ֆուքարի տոժը ըլլայ, ըսեր էր իր նախորդն Թովմաս Մոշենիկոյ մեռնելուն ժամանակ (1423) անոր ընտրութենէն ետ կեցընելով, միշտ պատշերազմաց մէջ պիտի ապրիք։ ով որ տասն հազար տուքաթ ունի՝ հազարէն աւելի պիտի շմայ քովը. ով որ երկու տուն ունի՝ մէկը պիտի կորսնցընէ. պիտի վատնէք ոսկի, արծաթ, անուն և պատիւ. և փոխանակ տէր ըլլալու՝ վարձկանաց և անոնց առաջնորդաց ծառայք պիտի ըլլաք»։ Ստուգուեր էր կանխասացութիւնն. բայց հասարակապետութիւնն կրնար զօրանալ, վերականգնիլ, եթէ դժբաղդաբար շատ դիպուածներ վրայ հասնելով՝ անոր ոյժն սպառած չըլլային, որոնց զիխաւորները պատշաճ կը համարինք համառոտիւ յիշաւակել այս տեղ։

Ազնուականք մեծ վտանգի ժամանակ, ինչպէս տեսանք, ժողովրդեան դիմած էին (1380) և հրաւիրած էին բազկաւ և խորհրդով հայրեննեաց օդնելու։ Ժողովուրդն համապատասխանած էր հրաւիրանաց. և վենետիկ ազատելով երեսուն ընտանիք ՚ի ժողովրդենէ ՚ի Մեծագոյն ժողով մասեր էին։ Եթէ Մեծագոյն ժողովն կ'ուզէր հասարակապետութեան զեկը ձեռացը մէջ ունենալ՝ պէտք էր որ հասարակապետութեան մէջ եզած բոլոր հանձնարեղներն և քաջերն ՚ի մի հաւաքէր։ Անոր համար Քառասնից մէջնէն երկու զիխաւորը՝ Պետրոս Արիմոնտոյ և Պետրոս Միանի քիչ տարի վերջը (1403) կ'ուզէին առաջարկել որ երբ պատրիկ ըն-

տանիք մը չնջուելու ըլլայ, ժողովրդեան մէջնէն արժանադրյններէն մէկն անոր տեղն անցնի։ Բայց ազնուապետութիւնն կը սկսէր իւր դասուն թերութիւնները ցուցընել, և ոչ միայն արհամարհեց այս իմաստուն խորհուրդս, որ թերեւս զինքը կրնար փրկել, այլ և ոչ ներեց որ խնդրոյ նիւթը ըլլայ։ Անոր հակառակ 1423ին բոլորովին վերցաւ ժողովրդական խորհրդարանն (Arento). և Մեծագոյն ժողովով որոշեալ ամենայն օրէնք և կարգադրութիւնք վաւեր և հաստատուն պիտի համարուէին, առանց ժողովրդենէն հաստատուելու, որուն անունն իսկ քիչ ատենէն հասարակաց գործոց մէջնէն չնջուեցաւ. վասն զի Հասարակուրիւն վենետիկոյ (Comune Venetiarum) անուան փոխանակեց իշխանութիւնն (Dominium կամ Signoria) (1462)։ Ժողովուրդն չշարժեցաւ, որ յայտնի նշան էր թէ հասարակաց գործերէ քաշուերէ։ Բայց աղնուապետութիւնն որ երեք դար (1472-1462) յամառութեամբ յազդանակին համնիլ կը դիտէր, չնախատեսեց որ իրեն վլուանդն կը սկսէր այս տեղ։ Եւ իրաւցնէ այս ժամանակներէս կը սկըսին, կամ աւելի կը յաճախեն հասարակաց գործոց մէջ աղմուկը ընդդէմ հետամտից իշխանութեան, կողմնակցութիւնք, տարածածյնութիւնք, փառասիրութիւնք, բռնութիւնք, վերջապէս՝ զեղծմունք ազնուականաց, զորս Տասունք օրինօք և սպառնալեօք հանդերձ անգիտանալ կամ չնջել չկարենալ կը ձեւցընէին։ Ազնուակապետութիւնն ծանրաբայցը բայց սկսէր էր ապականիլ. և եթէ ծերակիցտն կը գանգատէր 1535ին որ և ազնուական երիտասարդութիւնն առևտորոց չի զբաղիր քաղքին մէջ, ոչ նաւարկութեան և կամ որ և իցէ գովելիք ձեռագործի, ըսել էր թէ վաճառականութեան և արուեստից անհոգութիւնն ալ մեծ էր։ Ժողովրդեան մէջնէն քարտուղարաց դասն միայն հասարակաց գործոց մասնակից էր, ծննդեամբ քաղաքացիք կը կոչուէին, որոնք միջին դասակարգութիւն մը կազմեցին

և ազնուապետութեան ապագայ ան-
կման ժամանակ հետզհետէ մեծ կարեռ-
բութիւն ստացան : Բայց ժողովրդեան
մեծ մասն հասարակաց գործերէ ան-
մասն ըլլալով, փութայնանութեամբ ա-
ռանձնական գործոց կը զբաղէր : Բատ
թովմաս Մոշենիկոյի՝ վենետիկոյ մէջ իր
ժամանակն (1423) երեսունուկեց հա-
զար նաւաստիք կային . նաւական շի-
նուածոց՝ վեց հազար գործաւորք, երեք
հազար՝ սատայնանկութեան, բամբա-
կեայ կտաւոյ տաննուվեց հազար. մնա-
ցածն ալ այս գումարէս կրնայ չափուիլ:
Բայց տէրութեան գործերէն գուրս ըլ-
լալն պէտք էր որ վնասէր ժողովրդեան
ճարտարութեանց, և արդէն 1480էն՝ ի
վեր օրէնք մը կը գտննէք, յորում կը-
սուի՛ թէ « ձեռագործք յանկման են .
և եթէ բատ ժամանակին չոգացուին՝
չարագոյն վերջ պիտի ունենան ՚ի մեծ
վնաս քաղաքիս, որուն մուտքն կը նուա-
զի և ժողովուրդն կը սպառի » : կան-
խեալ վախեր էին բայց ստոյգք . վասն
զի առանց անդիտանալու այն քաղա-
քական տեսալութեան յարդը, յորում
անկարելի էր թէ տիրէր մէկու մը բաց-
արձակ կամքն և կամ շատերու ազա-
տութիւնը, միւս կողմանէ չենք կրնար
շճանչնալ որ ազնուապետութեան բո-
լորովին յաղթանակն՝ հաւասարապէս
վնասակար էր թէ յաղթուղաց և թէ
պարտուղուց Պատճառներն յայտնի են .
հետեւանքն ծանր պիտի ըլլային՝ այլ
անհրաժեշտ :

Այս ժամանակիներս ուրիշ դէպք մ'ալ
կը հանդիպէր որ մեծ հարուած պիտի
ըլլար վենետիկոյ բարդաւաճանաց, կոս-
տանդնուալոյիս թուրքաց ձեռքն ինկ-
ներով՝ այն երկիրներուն քաղաքական
և վաճառականական վիճակներն կրնա-
յին ամբողջապէս փոխուած համա-
րուիլ. և հասարակապէտութիւնն պէտք
էր յառաջ և աւելի քան զորիքի աէրու-
թիւնները վախնալ և հետեւանքը կան-
խատեսել :

Ասոր համար Մեհմէտ թէ հետ դաշ-
նագորութիւն մ'ըրեր էր (1454). բայց
ոլ կրնար վստահիլ, ոչ միայն վաճա-

ռականութիւննին, այլ նաև կալուած-
ներն վտանգի մէջ էին ՚ի թուրքաց : Եւ-
րոպա կը զգար այս նոր պետութեան
վտանգը . բայց ընդհանրապէս ուրիշ
կերպով օգնութիւն չէր տար վենետ-
իոյ՝ բայց եթէ բանիկոք : Ինքն վենետիկ
ստիպուեցաւ ուրեմն գրեթէ միշտ ա-
ռանձնն ընդդիմանալու պատերազմաւ :
Հասարակապետութեան ինդիրն՝ քա-
ղաքականութեան ինդիր էր, ուստի
պատերազմն ալ արդար եղաւ և յաճախ
դիւցազնական, այլ ոչ միշտ նոյնպէս
յաջող: Փողոս էրիցցոյ ՚ի Նէկրոբոնդ
(1470), Գետրոս Մոշենիկոյ ՚ի Զմիւռ-
նիա (1472) և Անտոն Լորետան ՚ի Սիկու-
տար (1474), բաւական էին ցուցընելու-
թէ ՚ի վենետիկեցիս չէր չինած այն քա-
ջութիւնն, որուն վրայ թէրես յանիրա-
ւի կասկած տուաւ . Անտոն կրիմանի
(1499) : Բայց քսան տարի թուրքաց
հետ յամառութեամբ մզեալ երկու պա-
տերազմունք (1463-1479, 1499-1503)
երկու գանձադրութեամբք վերջացան,
որոնցմով վենետիկ ոչ միայն կորսըն-
ցուց զդրոյնեա (Ա.քսէրայ), և զլիկիւտաք-
յլլապանիա, զթդալիմենէ և զնէկրո-
բոնդէ Ալրիփանդոսին մէջ (1479),
զլերանդոյ, զդորոն և զլիեթոն (1503)
և որոնք հիմունք և ապահովութիւն էին
հասարակապետութեան՝ Ալբելից այն
կողմն ո, այլ և ստիպուեցաւ թուրքաց
հարկ մ'ալ հասուցանելու : Եւ արդէն
կիբրոսի համար՝ որ կատարինէ Գոռ-
նարոյի վիճակեր էր՝ հասարակապե-
տութիւնն հարկատու եղած էր Սուլ-
դանին (1489) : Ի՞նչպէս երթարով կը
բողբուէին, կը բազմանային կործան-
ման սերմանքն : « վենետիկ, կ'ըսէ ժա-
մանակակիցն չերոնիմոս բրիուլի իրեն
Օրագրութեանց մէջ, մեծ խեղճութեան
մէջ էր՝ ծովային իշխանութիւնը կոր-
սուցընելու վախսէն . վասն զի վենետիկ,
ցւոց նաւարկութիւնն և ծովային զօ-
րութիւնը պակսելով, իրենց փառքն և
համարումն ալ պիտի պակսէր, և քիչ
տարւոյ մէջ կամաց կամաց պիտի ջըն-
ջուէին » :

Ծովային զօրութիւնն ՚ի թուրքաց

վտանգի մէջ էր, նաւարկութիւնն ալ զիստորապէս Բորդուգ.ացւոց նոր աշխարհներ գտնելէն : Գոլովապոսի առաջարկութեանց մերժուելուն վրայ՝ ի վենետիկցւոց հաւաստի յիշատակութիւն մը չի գտնուէր : Ընդ հակառակն կը գտնուին յիշատակարաններ՝ որոնք կը հաստատեն, թէ ինչպէս ուշադրութեամբ Բորդուգացւոց յառաջարկիմութեան աչք տնկեր էր : Աղէկ կը զգար հասարակապետութիւնն որ ասոնց ճամբորդութիւններն իրեն վաճառականութեան մահացու հարուած մ'էին . ուստի ոչ միայն խորհուրդ տուաւ Մամէլուքաց Հնդկաստանէն 'ի յահիրէ և անկէ Երոպա մտնող համեմոց վրայ ծանրացեալ Հարկը վերցընելու, այլ կանխատեսութեամբ 1504էն Սիւէզի անցքը մտածեց : Իրաւ է որ յետ երկար վիճաննց զգուշացաւ յայտնապէս առաջարկելու զայն Սուլդանին, Եգիպտոսի հաւանական նախանձարդութենէն վախինալով : Սակայն մասնաւոր այս գործերու վերաբերեալ յանձնաժողով մը, կրնար հաւանօրէն հնարք մը զըտնել՝ կամ Բորդուգացւոց բազզին մասնակցելու, կամ գոնեա առ ժամանակ մը ուշացընելու այն ձախորդ հետևանքը, որոնք առ հասարակի յափակութիւն, նարար վենետիկոյ վրայ պիտի դային, վաճառականութեան կենդրոնին Միջերկրականի ծոցէն Ալտանդեան ափանց վրայ փոխադրուելուն համար, եթէ այս ատեններս հասարակապետութիւնն մրրկէ մը պաշարեալ չըլլար, որ կրնար զինքը բոլորովին արմատախիլ ընել և ննջել եթէ զօրաւոր և ճարտար չգտնուէր :

Ճամպար երկրի տիրապետութիւնն ըզվենետիկ թերակզբույն ամենայն խռովութեանց մասնակից ըրած էր : Դրժբագրաբար մեծ զարուն վերջին տարիներն և յաջորդին սկիզբներն Երոպայի քաղաքագիտութիւնն բովանդակ յատարակոյ վրայ դարձաւ . և վենետիկ այն հնարագիտութեանց մէջ բռնուելով նախ 1495ին Լուդովիկոս Մորոյ Միջանու զքսին հետ դաշնակցեցաւ Գաղղիոյ

դէմ. չորս տարի վերջը Գաղղիոյ հետ ընդգէմ Մորոյի (1499) : Խտալիոյ վրայ այն ժամանակ ոչ վենետիկ և ոչ այլ ոք կը մտածէր . ամեն Ցէրութիւն ինքզին.քը մեծցընել կը յանար, և հասարակապետութիւնն քան զայլս արթուն և բարդաւոր գտնուելով կարծես թէ իր յանից մէջ ամենէն աւելի կը յաջողէր : « Այս անյագ ցանկութիւնն », այսպէս կոչեցին զայն Գամպրէյի խոհեմ քաղաքագէտքն, Մեծ Գաշնակցութեան պատճառ եղաւ, յորում ամբողջ Երոպա մի և նոյն մտածութեան վրայ միացաւ . որ էր Կողոպտել զհասարակապետութիւնն իտալիոյ մէջ ունեցած ամեն կալուածներէն . և Մաքսիմիլիանոսի կամաց համեմատ՝ նաև աւերել ըշվենետիկ քաղաքը, և տեղը չորս բերդ կանգնել, որոնց պահապանք պիտի ըլլային չորս մեծ դաշնակից Ցէրութիւններն :

Այսպէս մէկ հարուածով հասարակապետութիւնն պիտի կործանէր :

Եղածն շատ ծանօթ է . հասարակապետութիւնն յաղթուելով 'ի կիարատատատա, մերձ 'ի Գրեմննա (1509), իր հպատակները հաւատարմութեան երդմանէն չըուծեց, այլ գործոց ստիպմանէն զբանակը լճակաց Նեղբքն ամփոփեց : Յետոյ մտածեց կորսընցուցածը զինուք և հնարագիտութեամբ կրկին ձեռք բերել, և երկոքն ալ յաջողցուց : Գամպրէյի Դաշնակցութիւնը քակեց և Սրբազան Դաշնակցութիւնը կազմեց, յորում Յուլիոս Բ քահանայապետն և Ֆէրտինանտ Ռւլդափառն և հասարակապետութիւնն, քիչ առաջ իրարութնամիք, մէկտեղ պիտի պատերազմէն զայլիացիս ամար (1511) : Գաղղիոյ բաղդն խաւարեցաւ 'ի Բաւեննա, կատոն առ ֆուայի մահուամբն (1512) . որով Լուդովիկոս միտ, որ Գամպրէյի դաշնակցութիւնը ձեացընողն էր, վերջապէս վենետիկոյ դիմեց, պայմանաւ որ ինքն զՄիլան առնըլով փոխադրած զիիարատատատա իրենց պիտի զարձնէր (1513) : Եւ Լուդովիկոսի կենդանութեան ատեն

վենետիկան զինուց ձախորդութիւնքն Մարինիանոյի անուանի պատերազմին մէջ յաղթանակեցին (1515)։ որով Նոյնի գաշնադրութեամբ վենետիկ դարձեալ ստացաւ իր ամբողջ ցամնք երկրի մասը (1516)։ Քաղաքը մը, որ Եւրոպայի յաղթեր էր, կըսէ Սիցիլիան, կը կրնար անմահ համարուիլ, բայց հսկայական պատերազմին համար ըրած զոհերն անոր ոյժը սպառեր էին։ Վենետիկ իր գաւառները ստացաւ։ բայց ասկէ վերջը ստիպուեցաւ իր ամենայն ճիշճնը թափելու, ըստ անկեղծ պատմագրի մը բանից, որպէս զի օտարաց հետազոտ և նախանձորդ աչքէն իր անբուժելի վէրքերը ծածէկ։

Եւս առաւել որ հաստատեալ խաղաղութիւնն երկար չտեսեց։ և իտալիոյ խռովութիւններն և 'ի թուրքաց վախն կը ստիպէին զտկարացեան վենետիկ անդադար զէն 'ի ձեռնին կենալու։ Հառդոփ անկումն յայտնի սպառնալիք էր վենետիկեցւոց վաճառականութեան և իւր ստացուածոցն յլիքելու։ և հասարակապետութիւնն մեծ ջանքով կը նայէր Սիւլէյմանի բարձրութիւնը զըրդող պատճառները հեռացընելու։ Սակայն միւս կողմանէ իր պատիւն ալ զիտնալով՝ կայսրութեան դէմ թուրքաց իրեն նուիրած զաշնակցութիւնը մերժեց, և քաջութեամբ պաշտպանեց զիորֆու խայրէտտինի զինուց դէմ, որ դարձեալ զօրացաւ Արջիպեղագոսի քա-

նի մը կրպեաց տիրելով (1537)։ Այն ատեն վենետիկ Պօղոս գի և կարողոս Եի հետ միաբանելով (1538) դարձեալ, ստուգեց որ ինքն իր վրայ միայն պէտք էր վատահիլ. և հետևեալ դաշնազդութեամբ թուրքաց թողուց զնէապօխս Ռոմանիոյ և զիշալուաղիս (1540)։ Անկէ յաջող չեղաւ յետոյ Փիլիպպոս թի և Պիոս թի հետ ըրած դաշնակցութիւնն ալ. վասն զի կիպրոս օգնութիւն չունեցաւ, թէպէտ և Պրակատինոյ նահատակն զայն ցվերջին շունչ քաջութեամբ պաշտպանեց (1571). և Փիլիպպոս թի վառասիրութիւնն թէ և չկըրցաւ զէերանդոյի յաղթութիւնն արգելով, սակայն գրեթէ անօգուտ ըրաւ զայն (1571), եւ այսպէս հասարակապետութիւնն տեսնելով 'ի փորձոյ՝ որ դաշնակիցք ոչ վտանգի ժամանակ իրեն կ'օգնէին և ոչ յաղթութեանցը կը հետեւին, առանձին կնքեց զիսաղաղութիւն (1578)։ որուն վրայ յանդիմանութիւնն կրեց. բայց կիպրոսի կորուտոն, որ կրնար արդիութիւն կ'արդարացնէր զիսասարակապետութիւնն ։ վերջապէս վենետիկ միայն ինք զինքը հոգալով ապագային մէջ, ամենսին Աւտորիացւոց նախանձէն չվախցաւ, երբ Բայրմանովայի բերդը կանգնեց, պաշտպանելու համար զվրիութիւն 'ի թուրքաց, որը կրկին անգամ անոր վրայ ասպատակեր էին (1593)։

Կը շարունակուի։

ԽՕՍՔ ՀԱՅՐԵՆԱԾՈՒԹՅԱՆՔ ՏԵՐԵՆՏԻՈՍ ՄԱՄԻԱՆԻ ԻՏԱԼԱՑԻՈՑ

Տերենտոս Մամիանի Խառալոցի քաջ գրական և փիլիսոփայ հայրենասէր անձն, իր հայրենակցներէն մեծ խնջոյքի մը հրաւիրուած ըլլալով՝ 'ի Բնագրոց, և շատ գովեստաներ ըւելով այս տեղ յաստիւնաւոր անդամանաց և յայլոց, սիրութ եւլած այս համառօտ խօսքերը կ'ուղղէ առ քաջապահցու իւր Տեսնելով իր Խօսք մէջ զանազան լրասամիտ իմաստներ՝ որք ի գէպ են և յարմար ոչ միայն Խառալոցը՝ այլ և հասարակաց, ինչպէս ինքն ալ կըսէ. պատշաճ գատեցակեցւու բազմավիպէն մէջ թարդմանելով։

Այրելի հայրենակիցք իւմ։

Պ. Քաղաքացիլիսին առ իսուղեալ մեծամեծ և միրոյ խօսքերը կը պսակեն այսօր այն շքել ընդունելութիւններն և եղական պատիւները՝ զորս առ իսպեղու չերք ձանձրանար. Սակայն մինչդեռ ձեռ ձեր այս ցոյցերն սրաի ազնիւ և վեհանձն զգացումներէն կը ծագին, յայտնապէս անհամեմատ են իմ տկար